ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԴԱՎԻԹ ԿԼԻՄԻ ԲԱԲԱՅԱՆ

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ ԵՎ ԿՈՎԿԱՍՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ-21–ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Է.00.02 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2018

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական խորհրդատու՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ. պրոֆեսոր Ա. Հ. Սիմոնյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ. պրոֆեսոր Ն. Հ. Հովհաննիսյան

ք.գ.դ. պրոֆեսոր Լ.Ղ. Շիրինյան

պ.գ.դ. Ռ. Կ. Կարապետյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2018 թ. մարտի 26-ին, ժամը 15:00-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է 2018 թ. փետրվարի 15-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտքարտուղար՝

պ.գ.թ. Գ.Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը

Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը (ՉԺՀ) աստիճանաբար ամրապնդում է իր դիրքերը համաշխարհային քաղաքականության մեջ, և ներկայումս Չինաստանն ունի գերակա ազգային շահեր երկրագնդի գրեթե բոլոր ծայրերում:

Ատենախոսության մեջ դիտարկվող տարածաշրջանները՝ Կենտրոնական Ասիան և Կովկասը, պատկանում են ռազմավարական կարևորագույն տարածաշրջանների և համաշխարհային աշխարհաքաղաքական առանցքային թատերաբեմերի շարքին, որոնց ազդեցությունից է, կարելի է ասել, մեծապես կախված համաշխարհային քաղաքականության մեջ ուժերի վերաբաշխումը: Վերոհիշյալ տարածաշրջաններում ավանդաբար ազդեցության գոտիների բաժանման բավական լարված մրցապայքար է ընթանում:

ՉԺՀ-ն առավել զարգացած հարաբերություններ ունի Կենտրոնական Ասիայի երկրների հետ, ինչը միանգամայն բնական է՝ հաշվի առնելով ինչպես ընդհանուր սահմանի, այնպես էլ բազմաթիվ միահյուսված խնդիրների առկայությունը: Դրա հետ մեկտեղ բավական դինամիկ են զարգանում Չինաստանի հարաբերությունները Կովկասի երկրների, ընդորում՝ ինչպես ճանաչված, այնպես էլ չճանաչված ու մասամբ ճանաչված երկրների հետ:

Ակնհայտ է, որ ՉԺՀ-ի որդեգրած քաղաքականության ուսումնասիրումը և դրա հետ հարաբերությունների զարգացումը առանձնակի կարևորություն է ներկայացնում Հայաստանի համար: Չինաստանը երկիր է, որի հետ մենք ունենք մի շարք ընդհանուր շահեր, և նրա հետ երկարաժամկետ հարաբերությունների հաստատումը հայկական պետականության համար կենսական նշանակության հրամայական է: Այդ պետության հետ ռազմավարական գործընկերության կառուցումը թույլ կտա մեզ ամրապնդել մեր երկրի անվտանգությունը:

Գիտական ասպարեզում ատենախոսության թեմայի հետազոտման աստիճանը.

Չինաստանի քաղաքականության ուսումնասիրումը վերոհիշյալ տարածաշրջաններում անհնար է առանց միջազգային ասպարեզում Պեկինի գործողությունների ընդհանուր ռազմավարության, նրա առջև դրված կարևորագույն քաղաքական, տնտեսական, գաղափարախոսական, էկոլոգիական և այլ խնդիրների, համաշխարհային խաղացողների, հատկապես՝ ԱՄՆ-ի և Ռուսաստանի հետ Չինաստանի

փոխհարաբերությունների ընկալման: Ատենախոսության կառուցվածքը որոշելիս առանջնորդվել ենք հենց այդ սկզբունքով:

Վերոնշյալ ուղղությունների գիտական մշակվածությունը տարբեր է: Չինաստանի զարգացման հարցերով, առհասարակ, նրա ռազմական և տնտեսական ներուժով, երկրում տիրող հիմնահարցերով, Պեկինի միջազգային հարաբերությունների համակարգով, այստեղ եղած մարտահրավերներով և հնարավորություններով, աշխարհում նրա ունեցած դիրքով և այլն զբաղվում են հզոր գիտավերլուծական ինստիտուտներ և կենտրոններ ինչպես Չինաստանում, այնպես էլ ԱՄՆ-ում, Ռուսաստանում, Հնդկաստանում, Եվրոպայի մի շարք երկրներում: Այս թեմաներով կան բազմաթիվ հետազոտություններ:

Չինաստանի քաղաքականության, տնտեսության, մշակույթի, պատմության և նրա կենսագործունեության զանազան կողմերի ուսումնասիրությամբ զբաղվում է ռուս մասնագետների բավական լայն շրջանակ, մասնավորապես կարելի է նշել Ա.Դ. Վոսկրեսենսկու[1], Դ.Բ. Մոսյակովի[2], Ա.Գ. Լարինի[3], Ս.Գ. Լուզյանինի և Մ.Բ. Մամոնովի[4], Գ.Ի. Չուֆրինի[5] և այլոց անունները:

Չինաստանի հետ փոխհարաբերությունների մասին ռուսաստանյան գիտավերլուծական շրջանակների մոտեցումներն ընդհանրացնելով՝ կարելի է առանձնացնել մի շարք մոտեցումներ: Այդ մոտեցումները հարաբերականորեն կարելի է բաժանել երկու խմբի: Դրանցից մեկի ներկայացուցիչները համարում են, որ Մոսկվան և Պեկինը պետք է սերտ համագործակցեն միջազգային ասպարեզում, քանզի նման համագործակցությունն ԱՄՆ-ի միանձնյա հեգեմոնիան կամ գերիշխանությունը խոչընդոտելու երաշխիք է: Քաղաքագետների մեկ այլ խումբ Չինաստանի մեջ որոշակի սպառնալիք է տեսնում, որը հիմնականում պայմանավորված է էթնիկ չինացիների Ռուսաստան՝ հատկապես նրա սիբիրյան և Հեռավոր Արևելքի տարածաշրջաններ ժողովրդագրական ներթափանցմամբ և ապագայում Չինաստանի օգտին այդ տարածքների բնակչության ժողովրդագրական կառուցվածքի փոփոխությամբ:

---

[1] Воскресенский А.Д., Российско-китайское стратегическое взаимодействие и мировая политика. М.: Восток-Запад, 2004, 124 с.

[2] Мосяков Д.В., Политика Китая в Юго-Восточной Азии: от прошлого к настоящему. М.: ИВ РАН, 2012, 220 с.

[3] Ларин А.Г., Китайские мигранты в России. История и современность. М.: Восточная книга, 2009, 512 с.

[4] Лузянин С.Г., Мамонов М.В., Китай на пути к «сверхдержаве»: Сколько осталось пройти? // Обозреватель-Observer. 2011, № 4, с. 78-91.

[5] Чуфрин Г.И., Михеев В.В., Каменнов П.Б. и др. Китай в XXI веке. Глобализация интересов безопасности. М., 2007, 324 с.

Հարկ է ընդգծել հատկապես Ս.Գ. Լուզյանինի և Մ.Վ. Մամոնովի «Չինաստանը համաշխարհային և տարածաշրջանային տիրույթներում. ռեսուրսները և «վեհացման» երթուղիները» հետազոտությունը: Նրանք գտնում են, որ Պեկինը մշակել է վարքագծի հետաքրքիր ռազմավարություն՝ սկզբունքայնորեն և հետևողականորեն խուսափում է այլ պետությունների հետ «գրկախառնվելու» գաղափարից՝ խուսափելով դաշնակցային ցանկացած բնույթի հարաբերություններից:

Ռուսաստանում նաև հատուկ նշանակություն են տալիս Կենտրոնական Ասիայի և Չինաստանի որդեգրած քաղաքականությանը: Կենտրոնական Ասիայում տեղի ունեցող գործընթացների ուսումնասիրությամբ և տվյալ տարածաշրջանում ՉԺՀ-ի որդեգրած քաղաքականությամբ զբաղվող գիտնականների և հետազոտողների շարքում անհրաժեշտ է ընդգծել հետևյալ հեղինակների անունները՝ Յու.Մ. Մորոզովի[6], Վ.Վ. Նաումկինի[7], Ի.Դ. Զվյագելսկայայի[8], Ա.Դ. Բոգատուրովի[9] և ուրիշների:

Կարևոր աշխատություն է նաև 2009 թ. Մոսկվայում լույս տեսած «Կենտրոնական Ասիան վերափոխած տարիները» համատեղ մենագրությունը[10]. որի հեղինակներն են ՌԳԱ Արևելագիտության ինստիտուտի ղեկավար Վիտալի Նաումկինը և Ռուսաստանում Ռոզա Լյուքսեմբուրգի հիմնադրամի ղեկավար Պետեր Լինկեն: Հեղինակների պնդմամբ՝ ԱՄՆ-ում հաշվի են առնում, որ ՉԺՀ-ի էներգակիրները նրա «աքիլեսյան գարշապարն» են, և Վաշինգտոնը ջանքեր չի խնայում, որպեսզի Չինաստանի համար դժվարամատչելի դարձնի Կենտրոնական Ասիայի «խորթանոց» դուրս գալու հեռանկարը: Նույն նպատակն է հետապնդում «չինական գերիշխանության» սպառնալիքը ուռճացնելու արշավը, որը նաև շատ կողմնակիցներ ունի Ռուսաստանի և Կենտրոնական Ասիայի քաղաքական հաստատություններում և փորձագիտական հանրությունում:

---

[6] Морозов Ю.В., Центральная Азия как объект приложения разнородных сил: стимул к сотрудничеству или к конкуренции? // Проблемы Дальнего Востока. 2008, № 5, с. 179-185.

[7] Naumkin V., Radical Islam in Central Asia: Between Pen and Rifle. - Boulder: Rowman and Littlefield Publishers, 2005, 336 p.

[8] Наумкин В.В., Звягельская И.Д., Угрозы, вызовы и риски "нетрадиционного" ряда (Центральная Азия и Закавказье). М.: ЦСПИ, 1999, 67 с.

[9] Богатуров А.Д., Дундич А.С., Троицкий Е.Ф., Центральная Азия: «Отложенный нейтралитет» и международные отношения в 2000-х годах, Очерки текущей политики. Вып. 4, М.: НОФМО, 2010, 104 с.

[10] *Годы, которые изменили Центральную Азию* (коллективная монография), рук. проекта: В.В. Наумкин, П. Линке; отв. ред. И.Д. Звягельская, Институт востоковедения РАН, Центр стратегических и политических исследований, Москва, 2009.

Կենտրոնական Ասիայի, ինչպես նաև Չինաստանի քաղաքականության շուրջ լուրջ հետազոտություններ են կատարվում նաև տվյալ տարածաշրջանի տարբեր երկրներում: Կենտրոնական Ասիայում Չինաստանի որդեգրած քաղաքականության մասին ուսումնասիրություններով զբաղվող հեղինակների ցանկում հատկապես պետք է նշել Կ.Լ. Սըրոեժկինին[11], Ա.Խ. Խոջաևին[12], Վ.Վ. Պարամանովին, Օ.Ա. Ստոլպովսկուն, Ա.Վ. Ստրոկովին[13], Մ.Տ. Լումուլինին[14], Խ. Խոլիկնազարովին[15] և մի շարքի այլ հետազոտողների:

Հեղինակների մի գերակշիռ մասը ողջունում է Չինաստանի հետ կապերի ամրապնդումն ու խորացումը՝ դրական գնահատելով դրանք տարբեր գերտերությունների միջև հավասարակշռում պահպանելու տեսանկյունից, որը նրանց կարծիքով ամրապնդում է իրենց երկրների անկախությունը: Չինաստանի վերաբերյալ կան նաև երկյուղածություններ այս ասիական հսկայից կախվածության մեջ լինելու հեռանկարների առումով:

Ինչ վերաբերում է առանձին հեղինակների և հետազոտությունների, ապա այստեղ հատուկ տեղ է գրավում Ղազախստանի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, Սինցզյան համալսարանի պատվավոր պրոֆեսոր Կոնստանտին Սըրոեժկինի «Ղազախստան-Չինաստան. սահմանային առևտրից ռազմավարական դաշնակցություն» եռահատոր աշխատությունը:

Սըրոեժկինի գնահատմամբ՝ չին-ղազախական հարաբերությունները հասել են ռազամավարական գործընկերության մակարդակի: Ղազախստանցի փորձագետը նշում է, որ Կենտրոնական Ասիան Չինաստանը դիտարկում է որպես ռազմավարական կայուն թիկունք, և այդ տարածաշրջանի համար պայքարում Պեկինը տոնում է մարտավարական, բայց մշտական հաղթանակներ, թեպետ դեռևս վաղաժամ է կանխատեսել,

---

[11] Сыроежкин К., Проблемы современного Китая и безопасность в Центральной Азии. Алматы, 2006, 300 с.; Сыроежкин К., Казахстан - Китай: От приграничной торговли к стратегическому партнерству. В 3-х книгах. Алматы, 336 с.

[12] Ходжаев А.Х., Китайский фактор в Центральной Азии. Ташкент: Фан, 2004, 152 с.; Ходжаев А.Х., Китайские аналитики о Центрально-Азиатской политике Китая // Китай и страны Центральной Азии в современных геополитических реалиях. Сб. статей. / под ред. Л. Музапаровой. Алматы: Центр по изучению Китая при ИМЭП, 2008, с. 84-87.

[13]Парамонов В., Строков А., Столповский О. Россия и Китай в Центральной Азии: политика, экономика, безопасность. Бишкек, 2008, 196 с.

[14] Laumulin M., The Geopolitics of XXI Century in Central Asia Almaty: KazISS, 2007, 281 p.

[15] Холикназаров Х., Республика Таджикистан и Китайская Народная Республика – сотрудничество во имя развития. Сб. статей (2009- 2012 гг.). Душанбе: ЦСИ при Президенте РТ, 2012.

թե ինչպիսի աշխարհաքաղաքական իրավիճակ կստեղծվի ապագայում այդ տարածաշրջանում:

Հիշատակման արժանի են Ուզբեկստանի արևելագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող Աբլաթ Խոջաևի հետազոտությունները: Նրա կարծիքով՝ Պեկինը Կենտրոնական Ասիան դիտարկում է որպես ՉԺՀ-ի արևմտյան շրջանների կայունության պահպանման և անվտանգության ապահովման համար կենսական տարածք: Նա կարծում է, որ Պեկինը դեմ է այստեղ ԱՄՆ-ի ազդեցության ուժեղացմանը, ինչպես նաև բացասական է ընդունում Կենտրոնական Ասիան Ռուսաստանի «բակը» դառնալու հեռանկարը:

Բնական է, որ հատուկ կարևորություն ունի չինական գիտավերլուծական մտքի ուսումնասիրությունը: ՉԺՀ-ում ձևավորված են ԱՄՆ-ն, Ռուսաստանը, տարբեր տարածաշրջաններ, հատկապես՝ Կենտրոնական Ասիան ուսումնասիրող հզոր դպրոցներ: Չինական հետազոտողներից հիշատակման արժանի են հատկապես հետևյալ գիտնականները՝ Չժեն Բիցձյանը[16], Յան Սյուետունը[17] և Վան Սյանսույը[18]:

Չինական գրեթե բոլոր հետազոտությունների առանցքային գաղափարն այն է, որ երկբևեռ համակարգի փլուզումից հետո պետք է ձևավորել բազմաբևեռ համաշխարհային համակարգ, որտեղ որպես բևեռներ պետք է հանդես գան առնվազն երեք երկրներ՝ ԱՄՆ-ն, ՌԴ-ն և ՉԺՀ-ն: Չինացի գիտնականների մի զգալի մասը կանխատեսում է ԱՄՆ-ի և Չինաստանի միջև մրցակցության թեժացում Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում՝ միևնույն ժամանակ հանդիսանալով Չինաստանի խաղաղ վերելքի ջատագով:

Առանձին աշխատանքների շարքում բավական հետաքրքիր աղբյուր է չինացի հայտնի գիտնական Չժեն Բիցզյանի հոդվածների և ելույթների հավաքածուն, որը նվիրված է Չինաստանի խաղաղ վերելքին: Հատուկ արձագանքի է արժանացել նրա 2005 թ. ամերիկյան «Միջազգային Հարաբերություններ»[19] ամսագրում լույս տեսած հոդվածը: Չժեն Բիցզյանի հիմնարար գաղափարն այն է, որ Չինաստանը որդեգրել է ռազմավարական

---

[16] Zheng Bijian. China's Peaceful Rise: Speeches of Zheng Bijian 1997-2004. - Washington: The Brookings Institution, 2005, 40 p.

[17] Yan Xuetong. How China Can Defeat America / Yan Xuetong // The New York Times. 2011, November 21, P.A29; Yan Xuetong., Analysis of China's National Interests. - Monterey: Monterey Institute of International Studies, 2002, 198 p.

[18] Wang Xiangsui. Shifts in Global Power Gravity // Contemporary International Relations. China Institute of Contemporary International Relations. 2012, Vol. 22, № 1, January/February, p. 23-34.

[19]Zheng Bijian, "China's "Peaceful Rise" to Great-Power Status", *Foreign Affairs*, September/October 2005.

ուղենիշ, որը չի ներգրվում գերտերությունների վարքագծի ավանդական մոդելի մեջ:

Չինացի վերլուծաբանի համոզմամբ՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը մշակել է խաղաղ զորացման ռազմավարություն, որի առանցքային տարրեր էին հանդիսանում այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են շուկաների բացումը, կառուցակարգային նորարարությունները, տնտեսական համաշխարհայնացման մեկուսացման նախընտրումը, այլ երկրների հետ փոխշահավետ համագործակցության հաստատումը, որի դեպքում բոլոր ներգրավված երկրներն ել շահում են:

Չինաստանի աշխարհաքաղաքականության ուսումնասիրության գծով արժեքավոր աշխատություններ են չինացի հայտնի քաղաքագետներից և վերլուծաբաններից մեկի՝ Յան Սյուետունյի հետազոտությունները: Չինացի վերլուծաբանը կանխագուշակում է երկբևեռ համակարգի վերջաբանը՝ համարելով, որ սկսվել է բազմաբևեռ աշխարհի ձևավորման գործընթաց, որտեղ որպես բևեռներ հանդես են գալիս ԱՄՆ-ը, Ճապոնիան, Չինաստանը, Ռուսաստանը և Գերմանիան, ընդ որում՝ Ամերիկան միակ գերտերությունն է, իսկ մնացած երկրները հադես են գալիս որպես խոշոր տերություններ: Վերլուծաբանի կարծիքով՝ և տնտեսական, և ռազմական տեսանկյունից ուժեղացող Չինաստանի և ԱՄՆ-ի միջև մրցակցությունն անխուսափելի է:

Կենտրոնական Ասիայի քաղաքականության, տնտեսության, պատմության և մշակույթի ուսումնասիրությամբ զբաղվող չինացի գիտնականների և վերլուծաբանների շարքում պետք է ընդգծել Չժաո Հուաշենի[20], Լի Լիֆանյի[21], Հու Հունպինի[22], Դին Շիուի[23], Վան Ցուի, Դուն Սյաոանի[24], Լի Սինի[25] և այլոց անունները: Իրենց հետազոտություններում

[20] Чжао Хуашэн, Китай, Центральная Азия и Шанхайская организация сотрудничества. М., 2005, 63 с.; Чжао Хуашэн. Теоретические и практические основы китайской дипломатии в Центральной Азии. Сравнительный анализ некоторых теоретических аспектов стратегии КНР по отношению к своему окружению // Казахстан в глобальных процессах. 2008, № 3, с. 46-59.

[21] Li Lifan. Competition for Water Resources in Central Asia and its Impact on China // China and Eurasia Forum Quarterly, 2009, Vol. 7, № 4, p. 23-31.

[22] Ху Хунпин, Перспективы диверсификации инвестиционных потоков из Китая в центральноазиатский регион // Китай и страны Центральной Азии в современных геополитических реалиях. Сборник статей /под ред. Л. Музапаровой. Алматы: Центр по изучению Китая при ИМЭП, 2008, с. 92-96.

[23] Дин Шиу, Ли Лифань. Геополитические интересы России, США и Китая в Центральной Азии // Центральная Азия и Кавказ. 2004, № 3, с. 161-169.

[24] Дун Сяоян, Энергетическая стратегия Китая и сотрудничество со странами Центральной Азии // Китай и страны Центральной Азии в современных

նրանք հատուկ կարևորություն են տալիս Կենտրոնական Ասիայի ուսումնասիրությանը՝ այն դիտարկելով որպես կարևոր տարածաշրջան երկրի էներգետիկ անվտանգության ապահովման, անջատողականության դեմ պայքարի և Ռուսաստանի հետ փոխգործակցության համար, մասնավորապես՝ Շանխայի համագործակցության կազմակերպության շրջանակներում:

Խոսելով Կենտրոնական Ասիայում Չինաստանի դիրքերի մասին՝ Չժաո Հուաշենը, օրինակ, ընդգծում է, որ ՉԺՀ-ն սովորական հարևան չէ տարածաշրջանի պետությունների համար, այլ հանդիսանում է այդ պետությունների և ողջ տարածաշրջանի անվտանգության ապահովման հուսալի գրավականներից մեկը:

Արևմուտքում վաղուց արդեն գոյություն ունի չինագետների հզոր դպրոց և հայտնի վերլուծաբանների մի ողջ համաստեղություն: Նրանցից կարելի է հիշատակել Ֆրեդ Բրեքստենին, Չարլզ Ֆրիմենին, Նիկոլաս Լերդիին, Դերեք Միթչելին[26], Էրիկա Դաունս Ստրեկերին[27], Բոնի Գլաստերին[28], Մարկ Լեոնարդին[29]:

Չինաստանին այնպիսի մեծ ուշադրություն է հատկացվում ԱՄՆ-ի քաղաքական և գիտավերլուծական շրջանակների կողմից, որ նրա հետ փոխհարաբերությունները գտնվում են նաև հանրահայտ քաղաքական գործիչների և դիվանագետների հետաքրքրության ներքո: Այդ գործիչների շարքին են անկասկած պատկանում Հենրի Քիսինջերն ու Զգիբնև Բժեզինսկին:

Ընդհանուր առմամբ, ամերիկյան քաղաքական և վերլուծական միտքը համակարծիք է, որ ՉԺՀ-ն արդեն իսկ դարձել է համաշխարհային տերություն, առանց որի հնարավոր չէ պատկերացնել ներկայիս գլոբալ աշխարհաքաղաքականությունը: Միևնույն ժամանակ, այստեղ գոյություն ունի երկու հիմնական հոսանք: Մեկի ներկայացուցիչները համոզված են, որ ՉԺՀ-ն ԱՄՆ-ի համար ամենամեծ վտանգն է, և անհրաժեշտ է նրան ամեն կերպ սանձազերծել և թույլ չտալ, որ նա էլ ավելի հզորանա: Մյուսները ԱՄՆ-

---

геополитических реалиях. Сборник статей / под ред. Л. Музапаровой. Алматы, 2008, с. 19-23.

[25] Ли Син, Ван Чэнсин. Стратегия энергетической безопасности Китая в Центральной Азии // Сравнительная политика. 2013, № 2, с. 50-59.

[26] Bergsten F., Freeman C., Lardy N., Mitchell D. China's Rise. Challenges and Opportunities. Washington, DC: Peterson Institute for International Economics, Center for Strategic and International Studies, 2008, 288 p.

[27] Strecker D.E., China's Quest for Energy Security. Santa Monica: Rand, 2000, 81 p.

[28] Glaser B., Lyle M. Chinese Perceptions of U.S. Decline and Power // China Brief. The Jamestown Foundation. 2009, Vol. 9, Issue 14, p. 4-7.

[29] Leonard M., What Does China Think? New York: Public Affairs, 2008, 176 p.

Չինաստան բախումը համարում են վնասակար՝ առաջարկելով ձևավորել չին-ամերիկյան աշխարհաքաղաքական երկսի իշխանություն: Այդպիսի կարծիք է ժամանակին հայտնել Զգիբնև Բժեզինսկին:

Արևմտյան, մասնավորապես, ամերիկյան հետազոտողների ուշադրությունը հատկապես սևեռված է համաշխարհային քաղաքականության մեջ Պեկինի հավակնություններին, նրա տեղին ու դերին վերաբերող տեսլականին: Այս թեմային շուրջ հետազոտությունների շարքում բավականին հետաքրքրական է ամերիկացի հետազոտողներ Ֆրեդ Բրեքստենի, Չարլզ Ֆրիմենի, Նիկոլաս Լերդիի և Դերեք Միթչելի «Չինաստանի վերելքը. մարտահրավերներ և հնարավորություններ» համատեղ աշխատանքը: Ըստ հետազոտողների՝ Ամերիկայի և աշխարհի այլ պետությունների համար Չինաստանի վերելքը 21-րդ դարի ամենակարևոր մարտահրավերն է: Նրանք կարծում են, որ Չինաստանի ներգրավման քաղաքականությունը, որը բավականին երկար ժամանակահատված եղել է Չինաստանի նկատմամբ ԱՄՆ արտաքին քաղաքականության հիմքը, ցույց է տվել իր անարդյունավետությունը, որի հիմնական պատճառն այն էր, որ որևէ մեկը չէր կարողացել կանխատեսել Չինաստանի նման բուռն զարգացումը:

Օգտակար է նաև բրիտանացի գիտնական Մարք Լեոնարդի «Ինչ է մտածում Չինաստանը» մենագրությունը, որի հիմնական գաղափարն այն է, որ առանց Չինաստանը հասկանալու անհնարին կլինի ըմբռնել նաև համաշխարհային քաղաքականությունը: Հեղինակը համոզված է, որ Սառը պատերազմից հետո առաջին անգամ Եվրոպան և ԱՄՆ-ն՝ ի դեմս Չինաստանի, առերեսվել են զարգացման այլընտրանքային տարբերակի հետ:

Առանձնակի կարևորություն է ներկայացնում հանրահայտ դիվանագետ, ԱՄՆ ազգային անվտանգության նախկին խորհրդական Հենրի Քիսինջերի «Չինաստանի մասին» մենագրությունը[30]: Քիսինջերի տեսլականի հիմքը կազմում է այն հիմնադրույթը, որ ՉԺՀ-ն և ԱՄՆ-ն պետք է ոչ միայն խուսափեն բախումից, որը երկուսի համար էլ կործանարար կլինի, այլև համատեղ ստեղծեն Խաղաղօվկիանոսյան հանրություն, որը համահավասար կլինի Երկրորդ աշխարհամարտից հետո ԱՄՆ-ի և Եվրոպայի կողմից ստեղծված Ատլանտյան հանրությանը:

Չինաստանի քաղաքականության հետազոտման լուրջ դպրոց է ձևավորված Հնդկաստանում: Հնդկական գիտնականները միաձայն ընդունում են ՉԺՀ-ի կարևորությունը համաշխարհային քաղաքականության մեջ, թեպետ նրանց մոտ վառ արտահայտված են Չինաստանի նկատմամբ լուրջ մտահոգություններ, ինչի պատճառով հնդիկ փորձագետները

[30] Kissinger H., On China. New York: The Penguin Press, 2011, 608 p.

կարևորում են Դելիի ու Վաշինգտոնի սերտ համագործակցությունը՝ Պեկինին հավասարակշռելու համար:

Չինական հետազոտողներից իր ուրույն մոտեցումներով աչքի է ընկնում Նալանդա Ռոյը, որը բազմաթիվ աշխատությունների հեղինակ է[31]: Ռոյը առաջարկում է ուժեղացնել ԱՄՆ-ի և Հնդկաստանի դերակատարությունը և խորացնել նրանց միջև համագործակցությունը Հարավարևելյան Ասիայում Չինաստանին դիմակայելու նպատակով՝ նշելով, որ նման մոտեցման բացակայության հետևանքով ողջ տարածաշրջանը կանցնի ՉԺՀ-ի ազդեցության ոլորտ:

Բավականին հետաքրքրական է պրոֆեսոր Չինտամանի Մահապատրայի «Բարդ Սառը պատերազմ. Ամերիկաչինական հարաբերությունները և նրանց նշանակությունը Հնդկաստանի համար» հետազոտությունը[32]: Հնդկացի գիտնականի կարծիքով ԱՄՆ-ի և ՉԺՀ-ի փոխհարաբերությունները թևակոխել են որակական նոր հարթություն, որոնք լի են միմյանց նկատմամբ թերահավատությամբ, լարվածությամբ և հակասություններով, ինչը բնորոշ է գոյություն ունեցող և ձևավորվող գերտերությունների հարաբերություններին: Նման իրավիճակը հնդկացի պրոֆեսորը որակում է որպես նոր Սառը պատերազմ, թեպետ կարծում է, որ ի հակառակ այն բանի, որ Չինաստանը դեմ է միաբևեռ համակարգին, նրան գայթակղում է ԱՄՆ-ի հետ երկբևեռ համաշխահային համակարգ ձևավորելու գաղափարը:

Կենտրոնական Ասիայի և այնտեղ Չինաստանի քաղաքականության ուսումնասիրությունը գտնվում է նաև Արևմուտքի երկրների հատուկ ուշադրության կենտրոնում: Այս խնդրով զբաղվող հետազոտողների շարքում պետք է նշել Ալիսոն Ռոյին[33], Մարթա Բրիլլ Օլկոթին[34], Ֆիլիպ Միկլինին[35], Մառլեն Լոուրելին[36], Ջեյմս Միլվարդին[37], Թրեյսի Մարկեթոսին[38], Ֆրեդերիկ

---

[31] Տե՛ս օրինակ, Nalanda Roy. Troubled Waters, Anniversary Parade, PLA's Power Projection: Is China a Concern for the World? // Journal of Defence Studies. 2012, Vol. 6, Issue 2, p.44-62.

[32] Chintamani Mahapatra. Complex Cold Warriors: US-China Relations & Implications for India // Journal of Defence Studies. 2011, Vol. 5, Issue 3, p. 25-31.

[33] Allison R., Johnson L., Central Asian Security: The New International Context. Stockholm: Swedish Institute of International Affairs, Royal Institute of International Affairs, 2001, 296 p.

[34] Olcott M.B. Central Asia's Second Chance. - Washington, D.C, Carnegie Endowment of International Peace, 2005, 25p.

[35] Dying and Dead Seas. Climatic Versus Anthropic Causes / eds. Nihoul J., Zavialov P., Micklin, P. P. Liege: NATO Science Series, 2004, 391 p.

[36] Laruelle M., Peyrouse S. China as a Neighbor: Central Asian Perspectives and Strategies. Stockholm: Institute for Security and Development Policy, 2009, 203 p.

Սթարին[39] և մի խումբ այլ հեղինակների: Այս հեղինակները նաև մեծ նշանակություն են տալիս Կենտրոնական Ասիային՝ այն համարելով երկրագնդի ռազմավարական նշանակություն ունեցող կարևորագույն տարածաշրջաններից մեկը: Արևմտյան վերլուծաբանները փաստում են այս տարածաշրջանում Չինաստանի դիրքերի ու այստեղ ռուս-չինական համագործակցության ուժեղացման մասին, ինչը, պետք է խոստովանել, նրանց անհանգստացնում է:

Եթե Չինաստանի քաղաքականության գիտական ուսումնասիրվածության աստիճանն, ընդհանուր առմամբ, և նրա կենտրոնասիական ուղղվածությունը, մասնավորապես, բավականին բարձր է, ապա չինական աշխարհաքաղաքականության կովկասյան ուղղվածությունը հետազոտական շրջանակներում շարունակում է մնալ ոչ բավականաչափ բացահայտված:

Այս համատեքստում անդրկովկասյան երկրների շարքում առաջատար դիրքը պատկանում է Հայաստանին: Վրաստանում և Ադրբեջանում գոյություն ունեն միայն մի քանի ծավալուն աշխատանքներ ՉԺՀ և Հարավային Կովկասի հանրապետությունների միջև երկկողմ հարաբերությունների մասին: Այդպիսի աշխատանքների շարքին են դասվում, օրինակ, «Չինաստանի բիզնեսը Վրաստանում» հատուկ ամսագիրը, որը հրատարակված է Վրաստանի և Չինաստանի պետական կառույցների համատեղ ջանքերի շնորհիվ 2010 թվականին[40] և ադրբեջանական հետազոտող Է. Ի. Հաբիբզադեի մենագրությունը Չինաստանի և Ադրբեջանի միջև փոխգործակցության զարգացման հեռանկարների մասին, որը լույս է տեսել 2009 թվականին[41]:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա կարելի է ասել, որ այստեղ արդեն ձևավորվել է չինագիտության սեփական դպրոցը: Չինաստանի ուսումնասիրության հիմնական կենտրոններից է Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտը: Այստեղ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

---

[37] Millward J. Eurasian Crossroads: A History of Xinjiang. - New York: Columbia University Press, 2007, 440 p.; Millward J. Violent Separatism in Xinjiang: A Critical Assessment. Washington: East-West Center, 2004, 72 p.

[38] Marketos T.N., China's Energy Geopolitics: The Shanghai Cooperation Organization and Central Asia. London and New York: Routledge, 2009, 167 p.

[39] Starr F., In Defense of Greater Central Asia. Policy Paper. Washington: Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program. September, 2008, 14 p.; Starr F. Ferghana Valley: Heart of Central Asia. New York: M.E. Sharpe, 2011, 465 p.

[40] Chinese Business in Georgia // Special magazine. Tbilisi, 2010.

[41] Габибзаде Э., Азербайджан и Китай: Формы, особенности и перспективы развития взаимоотношений. Баку: Ин-т по Правам Человека, 2009, 314 с.

Նիկոլայ Հովհաննիսյանի խմբագրությամբ հրատարակվում է «Արևելասիական հետազոտություններ» ժողովածուն, որտեղ հրապարակվում են նաև Չինաստանի արտաքին քաղաքականության շուրջ գիտական հոդվածներ: Նիկոլայ Հովհաննիսյանն առաջիններից մեկն է նշել հայ գիտական և վերլուծական համայնքի կողմից Չինաստանի քաղաքականության ուսումնասիրման անհրաժեշտությունն ու կարևորությունը և նա հանդիսանում է Չինաստանի քաղաքականության և Հայաստանի հետ նրա հարաբերությունների մասին մի շարք հրապարակումների հեղինակ[42]: Գիտնականի հիմնական գաղափարն այն է, որ Չինաստանը դառնում է համաշխարհային աշխարհաքաղաքական կենտրոններից մեկը, և հայկական դիվանագիտությունը պետք է դա հաշվի առնի:

Աշխարհի տարբեր տարածաշրջաններում Չինաստանի վարած քաղաքականության ուշագրավ հետազոտությունների հեղինակ է նաև չինագետ Աղավնի Հարությունյանը: Հեղինակն անդրադառնում է Պարսից ծոցի երկրներում, Եգիպտոսում, Սաուդյան Արաբիայում, Սուդանում Չինաստանի քաղաքականության տարբեր բնագավառներին, ինչպես նաև դիտարկում է հայ-չինական հարաբերությունները[43]: Իր գործընկերների հետ հարաբերությունների զարգացման փիլիսոփայությունը, ըստ Աղավնի Հարությունյանի, Պեկինը հիմնում է զսպվածության և գործնականության սիմբիոզի վրա, որը զուգորդվում է տնտեսական օգուտների հետ:

Հայ-չինական հարաբերությունների մասին բավականին հետաքրքիր նյութ է նաև 2013 թվականին Հայաստանի խաղաղության կոմիտեի և Չինաստանի միջազգային հետազոտությունների հիմնադրամի կողմից հրատարակված «Չինաստանը հայերի աչքերով» խորագրով հայ հասարակական և քաղաքական գործիչների, լրագրողների և դասախոսների ակնարկների ժողովածուն:

---

[42] Հովհաննիսյան Ն., Արմատական փոփոխություններ ժամանակակից միջազգային հարաբերություններում՝ աշխարհի կենտրոնը տեղափոխվում է Արևմուտքից Արևելք, Արևելասիական ուսումնասիրություններ, հ. II, Երևան, 2011, էջ 5-28; Հովհաննիսյան Ն., Հայ արևելագիտության արևելասիական ուղղությունը, Արևելասիական ուսումնասիրություններ, հ. I, Երևան 2009, էջ 5-15:

[43] Հարությունյան Ա., ՉԺՀ-Իրան միջուկային համագործակցության շուրջ, Արևելասիական ուսումնասիրություններ, հ. I Երևան 2009, էջ 53-71: Հարությունյան Ա., Չին-Սաուդյան ռազմավարական համագործակցության շուրջ, Արևելասիական ուսումնասիրություններ, հ. I, Երևան 2009, էջ 72-91: Հարությունյան Ա., ՉԺՀ-ի հարաբերությունները Պարսից ծոցի համագործակցության խորհրդի երկրների հետ», Արևելասիական ուսումնասիրություններ, հ. I, Երևան, 2009, էջ 92-112:

Դոկտորական ատենախոսության նպատակն է՝ դիտարկել ՉԺՀ քաղաքականությունը ռազմավարական կարևորագույն նշանակություն ունեցող Կենտրոնական Ասիայի և Կովկասի աշխարհաքաղաքական տարածությունում 20-րդ դարի վերջից ցայսօր, նրա զարգացումն ու հիմնական նպատակները, յուրահատկությունները, տարբեր երկրների նկատմամբ կիրառվող մարտավարությունն ու ռազմավարությունը, նրանց ընտրության վրա ազդող գործոնները, ինչպես նաև տարածաշրջանային երկրների շահերը Չինաստանի հետ կապերի զարգացման համատեքստում:

Վերոհիշյալ նպատակին հասնելու համար աշխատությունում դրված են հետևյալ ***խնդիրները՝***

Դիտարկել ՉԺՀ-ի քաղաքականության հիմնարար սկզբունքները համաշխարհային հարթությունում և նրա հարաբերությունները ԱՄՆ-ի ու Ռուսաստանի հետ:

Ցույց տալ, որ իր զարգացման ներկա ժամանակահատվածում Չինաստանը տարբեր՝ հատկապես սահմանակից տարածաշրջաններում պետք է վարի ակտիվ ու նախաձեռնողական քաղաքականություն, և որ ինքնամեկուսացումն այլևս հնարավոր չէ:

Վերլուծել չինական քաղաքականության հրամայականները Կենտրոնական Ասիայում, տարածաշրջանի տարբեր պետություններում, այստեղ առկա մարտահրավերներն ու հնարավորությունները, կիրառվող մարտավարությունն ու ռազմավարությունը:

Դիտարկել չինական քաղաքականության հրամայականներն Անդրկովկասում, տարածաշրջանի տարբեր պետություններում, այստեղ առկա մարտահրավերներն ու հնարավորությունները, կիրառվող մարտավարությունն ու ռազմավարությունը:

Ցույց տալ հայ-չինական ռազմավարական համագործակցության կարևորությունը:

Ատենախոսության հետազոտության օբյեկտը հանդիսանում է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության աշխարհաքաղաքականությունը, նրա հիմնասյուները, գերնպատակներն ու հրամայականները:

Հետազոտության առարկան հանդիսանում է Չինաստանի քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում և Կովկասում 20-րդ դարի վերջից ցայսօր, և այս համատեքստում նրա հարաբերությունները համաշխարհային և տարածաշրջանային տերությունների հետ:

Հետազոտության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են ԽՍՀՄ-ի փլուզումից ցայսօր ընկած ժամանակատվածը:

Հետազոտության տեսամեթոդաբանական հիմքը պատմության, աշխարհաքաղաքականության, միջազգային հարաբերությունների,

տնտեսության օբյեկտիվ իրականության ընկալման ընդհանուր գիտական սկզբունքները: Աշխատանքի մեթոդաբանական հիմքը կազմում են պատմականությունն ու գիտական օբյեկտիվության սկզբունքներն են: Օգտագործված է համակարգված մոտեցում, ինչը թույլ է տալիս հնարավորինս հավասարակշռված և օբյեկտիվ դարձնել վերլուծությունն ու հետևությունները: Քննարկված հարցերը դիտարկվել են քաղաքական, տնտեսական, ռազմական, գաղափարախոսական, պատմական, էկոլոգիական, քաղաքակրթական և այլ հարթություններում:

Հետազոտության ***էմպիրիկ հիմք*** են հանդիսանում բազմաբնույթ աղբյուրներ, որոնք ընդգրկում են պաշտոնական փաստաթղթեր, հրապարակված և սփռված կենտրոնական, շրջանային և տեղական կառույցների կողմից, գիտահետազոտական կենտրոնների և անհատ վերլուծաբանների ու գիտնականների գրքեր, մենագրություններ, հոդվածներ, հրապարակումներ, տարբեր կազմակերպությունների կողմից տարածված տեղեկատվություն: Աղբյուրների աշխարհագրությունը բավականին լայն է և ընդգրկում է չինական, արևմտյան, ռուսական, Կենտրոնական Ասիայի և Կովկասի, ինչպես նաև այլ երկրների վերը թվարկված աղբյուրները:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջին անգամ Չինաստանի քաղաքականությունը համապարփակ ձևով դիտարկվել է Կենտրոնական Ասիայում և Կովկասում՝ որպես մի ընդհանուր աշխարհաքաղաքական տարածաշրջանի բաղադրամաս: Տարբեր երկրներում լուրջ հետազոտություններ են ընթանում Չինաստանի քաղաքականության տարբեր ուղղությունների, այդ թվում նաև Կենտրոնական Ասիայի պարագայում, սակայն բացակայում են Չինաստանի քաղաքականության դիտարկումները ինչպես Կովկասում, ընդհանուր առմամբ, այնպես էլ Կենտրոնական Ասիա-Կովկաս աշխարհաքաղաքական գերտարածաշրջանում:

Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը Կենտրոնական Ասիայում և Կովկասում վարում է բավականին ակտիվ ու ճյուղավորված քաղաքականություն, և այս տարածաշրջանները ժամանակի ընթացքում ավելի մեծ նշանակություն են ստանալու Չինաստանի համար՝ ինչպես սեփական անվտանգության ապահովման, այնպես էլ բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորման տեսանկյուններից:

Կենտրոնական Ասիան ունի առանցքային նշանակություն Չինաստանի համար: Ավելին, այդ տարածաշրջանից կարելի է ասել կախված է նաև Չինաստանի ապագան, որպես գերտերություն և գլոբալ աշխարհաքաղաքական գործոն: ՉԺՀ-ի աշխարհաքաղաքական գերնպատակն է՝ ստեղծել փոխկապվածության ու փոխխոցելիության

համակարգ և թույլ չտալ Կենտրոնական Ասիայի ընդգրկումը մրցակից երկրների ազդեցության ոլորտ, հատկապես որ այդ տարածաշրջանը սահմանակից է Չինաստանի ամենախոցելի կետերից մեկի՝ Սինցզյան Ույգուրյան ինքնավար մարզի հետ: Դժվար է գերագնահատել Կենտրոնական Ասիայի դերը նաև Չինաստանի էներգետիկ անվտանգության տեսանկյունից, ինչը թույլ է տալիս ապահովել էներգակիրների անխափան ներհոսքը ուղղակիորեն՝ շրջանցելով հնարավոր մրցակիցների վերահսկողության ներքո գտնվող տարածություններ:

Որպես այս տարածաշրջանում իր դիրքերը ամրապնդելու հիմնական գործոն՝ Պեկինը օգտագործում է տնտեսական փոխշահավետ համագործակցության ընդլայնումն ու խորացումը, թեպետ իր զինանոցում Չինաստանն ունի նաև ճնշման հնարավորություններ, որոնց մեջ հատուկ տեղ կարող է զբաղեցնել ջրային քաղաքականությունը:

Կովկասն ավանդաբար եղել է համաշխարհային աշխարհաքաղաքականության կարևորագույն թատերաբեմերից մեկը, որտեղ բախվում են զանազան համաշխարհային և տարածաշրջանային տերությունների շահերը: Անդրկովկասը ներկա պահին հանդիսանում է Կենտրոնական Ասիայի հետ անմիջական կապ հաստատելու աշխարհաքաղաքական յուրահատուկ մի «պորտալար», որը նաև սահմանակից է ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Հյուսիսային Կովկասի և Մերձավոր Արևելքի հետ: Չինաստանի ներգրավումը կովկասյան քաղաքականության մեջ օբյեկտիվ իրականություն է, որի ուրվագծերն արդեն իսկ հստակորեն նշմարվում են:

ՉԺՀ-ի քաղաքականության գերնպատակը այստեղ հանդիսանում է տարածաշրջանային պետությունների հետ կապերի զարգացումն ու խորացումը և դրա միջոցով մրցակից ուժերի և իր համար վտանգավոր գաղափարախոսական հոսանքների, մասնավորապես, պանթուրքիզմի ներթափանցման խոչընդոտումը, ընդ որում՝ Պեկինի դիրքերի ամրապնդումն այս տարածաշրջանում ձեռնտու է նաև Մոսկվային՝ Արևմուտքի և Թուրքիայի հետ նրա մրցակցության համատեքստում:

Աշխատանքի այս բաժնում գիտական նորույթ է հանդիսանում նաև այսպես կոչված «չճանաչված» կամ «մասամբ ճանաչված» երկրների հետ Չինաստանի հարաբերությունների դիտարկումը:

Նորույթ է նաև ՉԺՀ աշխարհաքաղաքական հրամայականների վերլուծությունը Ազով-սևծովյան տարածաշրջանում՝ որպես նրա կովկասյան քաղաքականության ճյուղավորումներից մեկը:

Հետազոտության գիտակիրառական նշանակությունն առաջին հերթին կայանում է նրանում, որ անհրաժեշտություն է մշտադիտարկել երկրագնդի ամենահզոր երկրներից մեկի՝ ՉԺՀ-ի քաղաքականությունը,

հատկապես՝ գլոբալ աշխարհաքաղաքակության համար առանձնակի նշանակություն ունեցող տարածաշրջաններում, որոնց շարքին են անկասկած պատկանում Կենտրոնական Ասիան ու Անդրկովկասը: Պեկինի քաղաքականության հետազոտությունը, նրա հրամայականների և գերնպատակների լավ պատկերացումը կարևոր է բոլոր այն երկրների համար, որոնք կենսական շահեր ունեն վերոհիշյալ տարածաշրջաններում և անմիջականորեն առնչվում են Չինաստանի հետ այլ տարածաշրջաններում ու հարթություններում:

Այս տարածաշրջաններում Չինաստանի քաղաքականության ուսումնասիրությունը կարևոր է նաև հայոց պետականության համար, քանի որ անմիջապես առնչվում է մեր երկրի կենսական շահերին, և ՉԺՀ-ի հետ փոխգործակցության ընդլայնումը նոր հնարավորություններ է ստեղծում Հայաստանի համար՝ ուժեղացնելու իր գործոնը տարածաշրջանային և գլոբալ քաղաքականության մեջ:

Աշխատությունը կարող է օգտագործվել քաղաքական ու գիտակրթական շրջանակներում և հիմք հանդիսանալ Չինաստանի քաղաքականության տարբեր ուղղությունների հետագա ուսումնասիրությունների համար:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, դիտարկվում է խնդրի գիտական ուսումնասիրվածության աստիճանը, սահմանվում են հետազոտության օբյեկտը, առարկան ու հիպոթեզը, նախանշվում են հետազոտության նպատակն ու հիմնական խնդիրները, ուսումնասիրվում են հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքը, նրա գիտական և գործնական նշանակությունը, ձևակերպվում են քննության դրված դրույթները և տեղեկություններ են տրվում աշխատանքի արդյունքների փորձարկման մասին:

Առաջին՝ «ՉԺՀ տեղն ու դերը միջազգային հարաբերությունների ժամանակակից համակարգում» գլխում դիտարկվում է ՉԺՀ տեղն ու դերը միջազգային հարաբերությունների ժամանակակից համակարգում, նրա փոխգործակցությունն այլ ուժային կենտրոնների, մասնավորապես՝ ԱՄՆ-ի հետ, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հիմնարար սկզբունքները և մի շարք այլ հարցեր:

Առաջին գլխի առաջին՝ «ԱՄՆ-ի քաղաքականությունը որպես միջազգային ասպարեզում ՉԺՀ գործողությունների հիմնական կողմնորոշիչներից մեկը» ենթագլխի մեջ դիտարկվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքականության ազդեցությունը ՉԺՀ քաղաքականության վրա:

Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը մշակել է Միացյալ Նահանգների հետ համագործակցության բավականին հետաքրքիր մեխանիզմ: Չինական քաղաքականության հիմքը հանդիսանում է ոչ միայն ԱՄՆ-ի նկատմամբ, այլև ընդհանրապես փոխադարձ խոցելիության ու փոխադարձ կախվածության իրավիճակի ստեղծումը: Ամերիկայի հետ իր փոխհարաբերությունները կառուցելիս ՉԺՀ-ն ակտիվորեն գործում է ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական հարթություններում: Ինչ վերաբերում է տնտեսական հարթությանը, այստեղ Չինաստանը, առաջին հերթին, ուժեղացնում է սեփական ռազմական պոտենցիալը, և երկրորդ, խորացնում է երկկողմ հարաբերությունները հիմնական տարածաշրջանային ու գլոբալ խաղացողների հետ, ամրապնդում իր դիրքերը ռազմավարական կարևոր տարածաշրջաններում: Այս համատեքստում ՉԺՀ-ի համար հատուկ կարևորություն է ներկայացնում հարաբերությունների զարգացումը Ռուսաստանի Դաշնության հետ:

Կարելի է առանձնացնել միջազգային հարաբերությունների՝ Չինաստանում տարածում ստացած երկու հիմնական մոտեցում: Ռեալիստներն ու նացիոնալիստները կարծում են, որ Չինաստանի ուժեղացման դեպքում նա կարող է իրականացնել իր նպատակները՝ գործելով միակողմանիորեն, երկկողմ հիմունքներով կամ համախոհների ոչ մեծ խմբերի հետ մեկտեղ: Հակառակ տեսակետ են արտահայտում նրանք, ովքեր կարծում են, որ սեփական հետաքրքրությունների պաշտպանության համար Չինաստանը պետք է ավելի կարևոր դեր ունենա միջազգային ասպարեզում: Նրանք հավաքական գործողությունների կողմնակիցներ չեն, չեն ցանկանում, որպեսզի հզոր միջազգային կազմակերպությունները սահմանափակեն իրենց երկրի գործողությունները, և որ ուրիշները ձայնի իրավունք ունենան Չինաստանի տնտեսական քաղաքականության մշակման գործում:

Երկրորդ՝ «Մեկուսացման անհնարինությունը» ենթագլխի մեջ ընդգծվում է Չինաստանի մեկուսացման անհնարինությունը ներկա պայմաններում: Այս փուլում այդպիսի ռազմավարության ընտրությունը գործնականում բացառված է, ինչը բացատրվում է մի շարք պատճառներով: Առաջին հերթին ժամանակակից միջազգային համակարգը, երկրորդ և, ամենակարևորը, չինական տնտեսության բուռն զարգացումը մեկուսացումը դարձնում են գրեթե անհնարին: Տնտեսական զարգացման կայուն տեմպերի պահպանման համար ՉԺՀ-ն, օրինակ, պետք է ապահովի ածխաջրածնային

պաշարների անխափան հոսք, որի սեփական պաշարներն անբավարար են պետության անընդհատ աճող կարիքները հոգալու համար: Որոշ տվյալների համաձայն՝ մինչև 2020 թվականը Չինաստանն արդեն կներմուծի մոտ 336 մլն տոննա նավթ, ինչը կկազմի այդ երկրի կողմից սպառվող նավթի 60 տոկոսը[44]: Գրեթե նույն իրավիճակն է ձևավորվում նաև բնական գազի դեպքում:

Իրավիճակը բարդանում է նրանով, որ ածխաջրածնային պաշարների պակասի փոխհատուցման համար Պեկինը պետք է ներմուծի այդ ռազմավարական կարևորություն ներկայացնող ռեսուրսները պոտենցիալ մրցակից երկրների, մասնավորապես՝ ԱՄՆ-ի ազդեցության տակ գտնվող տարածաշրջաններից: Միևնույն ժամանակ, նման ռազմավարական կարևոր ռեսուրսի պարագայում արտաքին աղբյուրներից կախվածության աճը գործնականում անթույլատրելի է Չինաստանի համար: Դա կանխելու համար Պեկինի համար իդեալական տարբերակ է ուժեղացնել իր ազդեցությունը ածխաջրածնային հումքով հարուստ տարածաշրջաններում և մատակարարման դիվերսիֆիկացիան Չինաստանի համար նույնիսկ հեռանկարում աշխարհաքաղաքական մրցակից չհանդիսացող երկրներից: Այսպիսի տարածաշրջանների շարքում աշխարհագրորեն ամենամոտը Չինաստանին հանդիսանում է, օրինակ, Կենտրոնական Ասիան: Դրա համար մեկուսացման փոխարեն Չինաստանն ակտիվորեն կներգրավվի համաշխարհային և տարածաշրջանային աշխարհաքաղաքականության մեջ:

Երրորդ՝ «Միջազգային ասպարեզում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության պահվածքի հիմնարար սկզբունքները» ենթագլխի մեջ դիտարկվում են Չինաստանի արտաքին քաղաքականության հիմքում ընկած սկզբունքները և դրանց էվոլյուցիան վերջին տասնամյակներում: Պեկինն իրեն համարում է աշխարհի ուժային կենտրոններից, բևեռներից մեկը:

Չինաստանի ռազմական քաղաքականության հիմքում ընկած է ակտիվ պաշտպանության ռազմավարությունը: Պեկինի համար բանակաշինության գործընթացում հատուկ նշանակություն ունի Ռուսաստանի Դաշնության հետ համագործակցությունը: Համագործակցությունը դրական ազդեցություն է ունեցել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ռազմատեխնիկական զարգացման աստիճանի վրա: Յուրացնելով նաև ռուսական փորձը՝ ՉԺՀ-ն զգալի առաջընթաց է արձանագրել սեփական ռազմարդյունաբերական տեխնոլոգիաների զարգացման գործում:

---

[44] China's demand for oil products to grow 5% annually // Xinhua [Electronic resource] Available at: http://news.xinhuanet.com/english2010/business/2010-03/26/c_13225650.htm (Mode of access: 26. 03. 2010).

Չինական արտաքին քաղաքականության հիմնական նպատակը երկարաժամկետ տնտեսական զարգացման համար նպաստավոր արտաքին միջավայրի ձևավորումն է, և մի քանի չինացի գիտնականների կարծիքով ՝դրան հասնելու միակ հնարավորությունը Միացյալ Նահանգների հետ ռազմական առճակատումից խուսափելն է: Մինչդեռ դա չի նշանակում, որ Չինաստանը կզիջի իր դիրքերը Ամերիկային կամ այլ երկրների: Ընդհակառակը, Պեկինը կայուն կերպով կուժեղացնի իր դիրքերը՝ ակտիվորեն աշխատելով քաղաքական, տնտեսական և այլ բնագավառներում:

Երկրորդ՝ «Չինաստանի աշխարհաքաղաքականությունը Կենտրոնական Ասիայում» գլուխը ուսումնասիրում է ՉԺՀ-ի աշխարհաքաղաքականությունը Կենտրոնական Ասիայում, այդ տարևաձաշրջանում Պեկինի հիմնական նպատակներն ու խնդիրները: **Առաջին՝ «Չինաստանի աշխարհաքաղաքականության կենտրոնասիական ուղղության ընդհանուր բնութագիրը» ենթագլուխը** դիտարկում է չինական քաղաքականության կենտրոնասիական ուղղության առանձնահատկությունները, այս տարածաշրջանի կարևորությունը Չինաստանի համար, նրա կողմից օգտագործվող մոտեցումները տարածաշրջանում և մի շարք այլ խնդիրներ:

Կենտրոնական Ասիայում Պեկինն առաջարկել է մի շարք բացարձակ նոր արտաքին քաղաքական մոտեցումներ: Դրանց թվում են «ներդաշնակ տարածաշրջան» կառուցելու ռազմավարությունը, որը Չինաստանն առաջին անգամ առաջարկեց Կենտրոնական Ասիայի առնչությամբ: Կենտրոնական Ասիայում Չինաստանը նաև առաջին անգամ առաջարկեց պահպանել «Շանհայի ոգին»՝ հիմնված փոխվստահության, փոխադարձ շահի, հավասարության, քաղաքակրթությունների բազմազանության նկատմամբ հարգանքի, համատեղ զարգացման ձգտման վրա: Կենտրոնական Ասիայում էր, որ Չինաստանն առաջարկեց անվտանգության և համագործակցության նոր համակարգային հայեցակարգ, որը հիմնված է համատեղ անվտանգության, դաշինքների չմիանալու, երրորդ երկրների հետ չհակառակվելու և նրանց դեմ չարտահայտվելու վրա: Վերջապես, Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում, ՉԺՀ-ն առաջին անգամ փորձ ձեռնարկեց նոր տեսակի տարածաշրջանային համագործակցություն կազմակերպելու ուղղությամբ:

Այսպիսով, Կենտրոնական Ասիայում Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը չի նախատեսում լինել միակ հեգեմոն, հատկապես՝ կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում: Առավել հարմար ռազմավարություն է՝ հասնել նրան, որ Կենտրոնական Ասիան չընկնի Չինաստանի հնարավոր և աշխարհաքաղաքական մրցակիցների ազդեցության տակ՝ դրանով իսկ այն դարձնելով Չինաստանի համար

«ռազմավարական թիկունք»: Այս համատեքստում Չինաստանի համար հատուկ նշանակություն ունի Ռուսաստանի Դաշնության հետ համագործակցությունը՝ հատկապես այն պատճառով, որ այդ երկու երկրների հետաքրքրություններն այս տարածաշրջանում համընկնում են: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է ընդգծել, որ տարածաշրջանի երկրների համար Չինաստանի հետ գործընկերային հարաբերությունների զարգացումը նույնպես շահավետ է:

Երկրորդ՝ «Կենտրոնական Ասիայի ուղղությամբ չինական քաղաքականության հիմնական ռազմավարական հրամայականները» ենթագլխում ուսումնասիրվում են Կենտրոնական Ասիայում չինական քաղաքականության հիմնական նպատակներն ու հրամայականները, Չինաստանի՝ այստեղ գոյություն ունեցող մտահոգությունները և տարածաշրջանի երկրների հետ Չինաստանի խորացող տնտեսական կապերի ռազմավարական նշանակությունը: Կենտրոնական Ասիայի ուղղության առանձնահատկությունն այն է, որ այստեղ է չինական հանրապետության խոցելի վայրերից մեկը, եթե ոչ ամենախոցելին՝ Սինցզյանը, որտեղ անջատողականությունը, որի հետ Պեկինը բավականին կոշտ պայքարում է, դեռևս չի թուլանում:

Խոսելով Սինցզյանում անջատողականության մասին՝ անհրաժեշտ է հաշվի առնել, որ Կենտրոնական Ասիայի երկրներում բնակվում է բավականին մեծ ույղուրական սփյուռք, իսկ Սինցզյանում ապրում են ղազախներ, որոնց թիվը հասնում է մոտ մեկ միլիոնի, ինչպես նաև ղրղզներ և այլ ազգային փոքրամասնություններ: Սա Պեկինի համար տարածաշրջանի երկրներում ստեղծում է լրացուցիչ աշխատանքի ճակատ, հատկապես որ իրավիճակը Սինցզյանում դեռևս ամբողջությամբ չի կայունացել, և բացառված չէ, որ ապագայում այնտեղ առաջանան էլ ավելի լուրջ խնդիրներ:

Կենտրոնական Ասիայի երկրների հետ տնտեսական կապերի խորացումը թույլ է տալիս Չինաստանին միաժամանակ հասնել մի քանի կարևոր նպատակների: Նախ՝ տնտեսական հարաբերություններն անդրադառնում են նաև քաղաքական բնագավառում այդ երկրների հետ հարաբերությունների վրա: Երկրորդ՝ Կենտրոնական Ասիան հարուստ է բնական ռեսուրսներով, հատկապես՝ ածխաջրածնային հումքով, ինչն այդքան անհրաժեշտ է Չինաստանին: Երրորդ՝ Կենտրոնական Ասիայի երկրների հետ տնտեսական կապերի սերտացումը թույլ կտա Պեկինին էլ ավելի մեծ թափ հաղորդել Սինցզյանի տնտեսական զարգացմանը, առավել ևս, որ այս գործընթացում Չինաստանը հիմնական խաղադրույքը դնում է հենց Սինցզյան-Ույղուրական ինքնավար շրջանի վրա, որը դարպաս է հանդիսանում դեպի Կենտրոնական Ասիա:

Երրորդ՝ «Կենտրոնական Ասիայի երկրների և Չինաստանի միջև երկկողմ հարաբերությունների զարգացման համառոտ ժամանակագրությունը» ենթագլխում բերվում է տարածաշրջանի յուրաքանչյուր երկրի հետ Չինաստանի փոխհարաբերությունների զարգացման ժամանակացույցը, դիտարկվում երկու երկրների միջև ստորագրված հիմնական փաստաթղթերը, առևտրաշրջանառության դինամիկան և այլն: Հարկ է նշել, որ Չինաստանը բավականին տեսանելի դիրք է զբաղեցնում տարածաշրջանի երկրների տնտեսական կյանքում՝ հանդիսանալով Կենտրոնական Ասիայի երկրների ամենախոշոր արտաքին առևտրային գործընկերը: Ավելին, աճի դինամիկայով Չինաստանն առաջատար դիրք է զբաղեցնում:

Չորրորդ՝ «Ռուսական գործոնի ազդեցությունը Կենտրոնական Ասիայում ՉԺՀ-ի քաղաքականության վրա» ենթագլխի մեջ ուսումնասիրվում է Ռուսաստանի ազդեցությունը Կենտրոնական Ասիայում Չինաստանի քաղաքականության վրա: Կենտրոնական Ասիայում, ինչպես արդեն նշվել է, Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը հատուկ նշանակություն է տալիս Մոսկվայի հետ հարաբերություններին և հարգանք է տածում Ռուսաստանի շահերի նկատմամբ: Շանհայի համագործակցության կազմակերպությունը մեծ կարևորություն է ներկայացնում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության համար՝ թույլ տալով լուծել մարտավարական և ռազմավարական բնույթի մի շարք կարևոր խնդիրներ:

Ռուսաստանի Դաշնության համար ՉԺՀ-ի հետ փոխհարաբերությունները, առանձնապես՝ Կենտրոնական Ասիայում, նույնպես կարևոր նշանակություն ունեն, հատկապես որ Մոսկվայի և Պեկինի՝ համաշխարհային խնդիրների նկատմամբ մոտեցումներում շատ ընդհանրություններ կան: Ավելին, հիմնական ռազմաքաղաքական ուսմունքները Ռուսաստանի և Չինաստանի միջև համագործակցությունը համարում են նոր աշխարհակարգի ձևավորման արդյունավետ մեխանիզմ:

Հինգերորդ՝ «Էներգետիկ և տրանսպորտային ոլորտներում համագործակցության ռազմավարական կարևորությունը» ենթագլխի մեջ նշվում է, որ էներգետիկ բնագավառում չինական քաղաքականության հրամայականը հանդիսանում է Կենտրոնական Ասիայից դեպի Չինաստան ածխաջրածնային հումքի անխափան հոսքի ապահովումը: Պեկինը Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի միջոցով դուրս է գալիս նաև Հարավային Կովկասի նավթի և գազի շուկա, ինչպես նաև ստանում անմիջական մուտք դեպի Իրան՝ Մերձավոր Արևելքի ածխաջրածնային պաշարներով հարուստ հիմնական երկրներից մեկը:

Ինչ վերաբերում է տրանսպորտի բնագավառին, այստեղ Չինաստանի հիմնական ռազմավարությունը կենտրոնանում է Կենտրոնական Ասիա երկրների և Չինաստանի միջև հուսալի տրանսպորտային կապի ստեղծման,

ինչպես նաև տարածաշրջանի երկրներին դեպի Ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան ելքի տրամադրման շուրջ: Սա բացում է լավ հեռանկարներ ինչպես Կենտրոնական Ասիայի երկրների, այնպես էլ հարևան երկրների համար: Կենտրոնական Ասիան կարող է դառնալ կապող օղակ Եվրոպայի, Հարավարևելյան Ասիայի, Ռուսաստանի և Մերձավոր Արևելքի միջև:

Վեցերորդ՝ «Կենտրոնական Ասիայում չինական սփյուռքի ձևավորումը» ենթագլխի մեջ դիտարկվում են Կենտրոնական Ասիայի երկրներում էթնիկ չինացիների ժողովրդագրական ներթափանցման հնարավորության հետ կապված հարցեր: Դա բավականին նուրբ հարց է, հատկապես՝ Ղազախստանում և Ղրղզստանում: Մի շարք գիտնականներ պնդում են, որ այն երկրներում, որտեղ Չինաստանի հետ կապերը արագորեն զարգանում են, անպայման մեծանում է չինական ներգաղթյալների թիվը, և, բարենպաստ պայմանների դեպքում, այս գործընթացը բացասական ազդեցություն կթողնի Կենտրոնական Ասիայում ժողովրդագրական իրավիճակի վրա:

Սակայն, զանգվածային ներհոսքի նման կանխատեսումները չեն հաստատվում պաշտոնական վիճակագրությամբ: Բացի այդ, այս հարցը քաղաքականացվում է, ինչի մասին վկայում են, մասնավորապես, տարբեր սոցիոլոգիական հարցումները: Ավելին, ժողովրդագրական էքսպանսիայի իրականացումն ընդհանրապես Չինաստանի շահերից չի բխում: Նման սպառնալիքների առաջացման դեպքում, հատկապես այնպիսի մի երկրի կողմից, ինչպիսինն է Չինաստանը, տարածաշրջանի երկրները կարող են վերակողմնորոշվել դեպի այլ ուժային կենտրոններ: Իսկ զարգացումների այդպիսի սցենարը Պեկինի հետաքրքրությունների մեջ չի մտնում:

«Ջրային քաղաքականություն» ենթագլխում անդրադարձ է կատարվում Չինաստանում և տարածաշրջանի երկրներում ջրի խնդիրներին: Հիդրոքաղաքականությունը Չինաստանի համար հանդիսանում է բավականին արդյունավետ, չնայած նաև ուժային մեխանիզմ է Կենտրոնական Ասիայի երկրների հետ փոխկախվածության իրավիճակի ստեղծման համար: Այսօր Չինաստանն ունի բավականին արդյունավետ լծակներ Ղազախստանի նկատմամբ ճնշումների իրականացման համար: Չինաստանի Ժողովրդական Հանրապետության՝ Ղազախստանի նկատմամբ հիդրոքաղաքականության առանցքային տարրերը կդառնան Իլի և Իրտիշ գետերը, այնինչ դրա ազդեցությունը կզգա ոչ միայն Ղազախստանը, այլ նաև Ռուսաստանի Դաշնությունը: Չինաստանի կողմից Իրտիշ գետի ջրերի օգտագործումը կարող է լուրջ խնդիրներ առաջացնել ինչպես Ղազախստանի, այնպես էլ Ռուսաստանի տնտեսության և էկոլոգիայի համար: Այնուամենայնիվ, այս հարցում Կենտրոնական Ասիայի մնացած մասը մնում է անպաշտպան Չինաստանի դիմաց:

Հիդրոքաղաքականության համատեքստում Կենտրոնական Ասիայում կարևոր դեր են խաղում Տաջիկստանը և Ղրղզստանը՝ հանդիսանալով Կենտրոնական Ասիայի ողջ տարածաշրջանում, այսպես կոչված, «հիդրոդոնոր»: Տաջիկստանում և Ղրղզստանում չինական դիրքերի ամրապնդումը դառնում է ՉԺՀ-ի կարևորագույն խնդիրներից մեկը:

Երրորդ՝ «Կովկասի տեղն ու դերը ՉԺՀ աշխարհաքաղաքական հայեցակարգի մեջ» գլխում դիտարկվում են Չինաստանի քաղաքականությունը Կովկասում, նրա նպատակները և տարբեր երկրների հետ կապերի խորացման մեխանիզմները:

Առաջին՝ «Կովկասյան ուղղությունում Չինաստանի աշխարհաքաղաքականության հիմնական սկզբունքները» ենթագլխում վերլուծության են ենթարկվում այն հիմնական սկզբունքները, որոնցով Պեկինը առաջնորդվում է կովկասյան աշխարհաքաղաքականության մեջ: Ի տարբերություն այլ գերտերությունների՝ Չինաստանն այստեղ նորեկ է և չի կրում որևէ պատմական պատասխանատվություն այստեղ առկա տարածայնությունների և հակամարտությունների համար, ինչն էլ թույլ է տալիս նրան շրջանցել բազմաթիվ վիճահարույց խնդիրներ: Պնդել, որ Կովկասը դարձել է չինական աշխարհաքաղաքականության առանցքային թատերաբեմը, վաղաժամ է: Այս տարածաշրջանի կարևորությունն, առաջին հերթին, պայմանավորված է Կենտրոնական Ասիայի հետ աշխարհաքաղաքական «պորտալար» լինելու հանգամանքով: ՉԺՀ-ի համար ամենակարևոր աշխարհաքաղաքական խնդիրն այստեղ հանդիսանում է թույլ չտալ, որպեսզի Անդրկովկասն անցնի մրցակից աշխարհաքաղաքական ուժերի և հոսանքների ազդեցության տակ, որտեղ առանձնակի նշանակություն ունի պան-թյուրքիզմի դեմ պայքարը: Հարավային Կովկասում Չինաստանը հավասարակշռված և բարիդրացիական հարաբերություններ է հաստատել բոլոր ճանաչված պետությունների հետ՝ միաժամանակ զարգացնելով կապերը չճանաչված և մասամբ ճանաչված երկրների հետ: Վերջիններիս հետ հարաբերությունների խորացումը հիմնականում ընթանում է մասնավոր ձեռներեցության խողովակներով:

Երկրորդ՝ «Ճանաչված երկրներ» ենթագլխում ներկայացված են Չինաստանի հարաբերությունները Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի հետ նրանց անկախացման ժամանահատվածից ցայսօր: Բոլոր այդ երկրների համար Չինաստանը դարձել է հիմնական տնտեսական գործընկերներից մեկը:

Երրորդ՝ «Չճանաչված և մասամբ ճանաչված երկրներ» ենթագլխում դիտարկվում են Չինաստանի կապերը Աբխազիայի, Արցախի և Հարավային Օսիայի հետ: Պետությունների այս խմբի հետ Պեկինն առնչվում է՝ վարելով չափազանց զգույշ քաղաքականություն՝ օգտագործելով միմիայն մասնավոր ձեռներեցության խողովակները: Երբեմն Պեկինը

հանդես է գալիս քաղաքական հայտարարություններով՝ կոչ անելով առկա բոլոր խնդիրները լուծել խաղաղ ճանապարհով՝ խուսափելով որևէ մի կողմին բացահայտ աջակցություն ցուցաբերելուց:

Եզրակացության մեջ ի մի են բերվում հետազոտության արդյունքները, ներկայացվում են հիմնական եզրակացությունները, տրվում են գործնական առաջարկներ:

1. Ներկա ժամանակաշրջանում Չինաստանը պարտավոր է վարել ակտիվ և նախաձեռնողական քաղաքականություն երկրագնդի տարբեր տարածաշրջաններում՝ հրաժարվելով ինքնամեկուսացման ցանկացած դրսևորումից: Ընդ որում՝ որպես գերնպատակ Պեկինը ցանկանում է ուժեղացնել իր դիրքերը միջազգային ասպարեզում՝ խուսափելով այլ երկրների, մասնավորապես, ԱՄՆ-ի հետ ուղիղ ռազմական առճակատումից:

2. Չինաստանի գերնպատակը Կենտրոնական Ասիայում հանդիսանում է մրցակից տերությունների ազդեցության տակ այդ տարածաշրջանի անցումը թույլ չտալը, բայց, միևնույն ժամանակ, Պեկինը նպատակ չունի նաև այստեղ հեգեմոնի դերակատարություն ստանձնել՝ հասկանալով դրա մեջ առկա վտանգներն ու անկանխատեսելի հետևանքները: Դրան հասնելու համար տարածաշրջանի երկրների հետ ՉԺՀ-ն փորձում է ստեղծել փոխկապվածության և փոխխոցելիության համակարգ՝ հիմնված տնտեսական փոխշահավետ համագործակցության ընդլայնման ու խորացման վրա, միաժամանակ պահպանելով ճնշման գործուն հնարավորություններ, որոնց մեջ հատուկ տեղ կարող է զբաղեցնել ջրային քաղաքականությունը:

3. Կենտրոնական Ասիան առաջնային դերակատարություն ունի Չինաստանի համար, և այդ տարածաշրջանը Պեկինը ցանկանում է տեսնել, որպես իր էներգետիկ անվտանգության հուսալի թիկունք:

4. Չինաստանը հետևողականորեն ակտիվացնում է իր քաղաքականությունը նաև Կովկասում, որը նա դիտարկում է որպես Կենտրոնական Ասիայում իր քաղաքական նպատակներն իրականացնելու կարևոր խթան: Կովկասում Պեկինը մշակել է հետաքրքիր աշխարհաքաղաքական ոճ՝ զարգացնել հարաբերությունները բոլոր երկրների հետ՝ շրջանցելով նրանց միջև առկա ամենաբարդ հիմնախնդիրները: Այս քաղաքականության արդյունավետության կարևոր գրավականներից է Պեկինի մոտ պատմական որևէ պատասխանատվության բացակայությունը տարածաշրջանում առկա հակասությունների նկատմամբ:

5. ՉԺՀ-ի աշխարհաքաղաքական գերնպատակը Անդրկովկասում հանդիսանում է մրցակից ուժերի և իր համար վտանգավոր գաղափարախոսական հոսանքների, մասնավորապես, պանթուրքիզմի, ներթափանցման խոչընդոտումը՝ լավ հասկանալով, որ այդ հոսանքները

անդրկովկասյան «պորտալարի» միջոցով կարող են ներթափանցել Կենտրոնական Ասիա և այնտեղից՝ անմիջապես Չինաստան:

6. Պեկինի դիրքերի ամրապնդումը Կովկասում համապատասխանում է նաև Մոսկվայի շահերին՝ Արևմուտքի ու Թուրքիայի հետ նրա մրցակցության և Հյուսիսային Կովկասում կայունության ամրապնդման համատեքստում:

7. Չինաստանի հետ փոխգործակցության զարգացումն ու ընդլայնումը, ՉԺՀ-ի դիրքերի ամրապնդումը Կենտրոնական Ասիայում և Կովկասում բխում են նաև հայոց պետականության կենսական շահերից: Հայաստանն ու Չինաստանը հանդիսանում են բնական դաշնակիցներ, մասնավորապես, պանթուրքիզմի ու Թուրքիայի հավակնոտ քաղաքականությանը դիմակայելու և այն չեզոքացնելու տեսանկյունից: Հայ-չինական ռազմավարական փոխգործակցությունը նոր հնարավորություններ է ստեղծում Հայաստանի համար՝ ուժեղացնելու նաև իր գործոնը տարածաշրջանային ու գլոբալ քաղաքականության մեջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Մենագրություններ

1. Бабаян Д.К., Геополитика Китая на современном этапе: некоторые направления и формы. Ереван: Де Факто, 2010, 352 с. 15 п.л.
2. Бабаян Д.К., Политика Китая в Центральной Азии, на Кавказе и в Северном Прикаспии в конце XX - начале XXI вв. М.: Институт востоковедения РАН, 2013, 328 с. 14 п.л.

Հոդվածներ գիտական ամսագրերում և գրախոսվող գիտական հրատարակություններում

1. Бабаян Д.К., «Гидрополитическое оружие»: китайская версия, Международные процессы. 2003, № 1, Январь-апрель. с. 106-109.
2. Бабаян Д.К., Поднебесная и Центральная Азия, Свободная мысль. 2006, № 11-12, с. 40-58.
3. Бабаян Д.К., Некоторые направления геополитики Китайской Народной Республики в Центральной Азии том 13, Центральная Азия и Кавказ. 2010, № 4, с. 62-74.
4. Бабаян Д.К., Центальноазиатское направление китайской геополитики, Государственная служба. 2010, № 6, с. 84-89.
5. Babayan D.K., Some of China's Geopolitical Vectors in Central Asia, Central Asia and the Caucasus. 2010, Vol. 11, Issue 4, p. 54-66.
6. Бабаян Д.К., Российско-китайские отношения сквозь призму демографии, Социология власти. 2011, № 1, с. 145-152.
7. Бабаян Д.К., Некоторые аспекты политики КНР на Кавказе, Центральная Азия и Кавказ. 2011, том 14, № 1, с. 82-93.
8. Babayan D.K., Pan-Turkism and geopolitics of China// XXI Century. 2011, № 1, p. 13-34.
9. Бабаян Д.К., Роль и место Южного Кавказа в геополитической повестке Китайской Народной Республики, 21-й век. 2011, № 2, с. 66-94.
10. Бабаян Д.К., Китайская геополитика на Северном Кавказе: основные императивы и направления, 21-й век. 2011, № 3, с. 62-83.
11. Бабаян Д.К., Регион Большого Кавказа в геоэкономической стратегии Китая, Россия и новые государства Евразии. 2011, № 3, с. 51-70.
12. Бабаян Д.К., Тибетский плацдарм китайской геополитики, Восток (Oriens). 2011, № 4, с. 81-99.
13. Бабаян Д.К., Демографический компонент российско-китайских отношений: вызовы и выгоды, Проблемы Дальнего Востока. 2011, №6, с.14-19.
14. Бабаян Д.К., Китайская Народная Республика и непризнанные государства, Вестник МГИМО-Университета. 2012, № 3, с. 75-79.
15. Бабаян Д.К., Северный Прикаспий на геополитической повестке КНР, Центральная Азия и Кавказ. 2012, том 15, № 3, с. 63-77.

16. Бабаян Д.К., Китайская Народная Республика в Азово-Северопричерноморском субрегионе: современное состояние и планы на будущее, Центральная Азия и Кавказ. 2012, том 15, № 4, с. 50-59.
17. Babayan D.K., The Northern Caspian on China's Geopolitical Agenda, Central Asia and the Caucasus. 2012, Vol. 13, Issue 3, p. 56-68.
18. Бабаян Д.К., Азово-Причерноморский регион в геополитической стратегии Китая, Россия и новые государства Евразии. 2012, № 4, с. 62-71.
19. Бабаян Д.К., Кавказ и другие постсоветские регионы во внешнеполитической повестке КНР, 21-й век. 2012, № 5, с. 81-104.
20. Бабаян Д.К., Политика КНР в регионе Северного Прикаспия, 21-Й век. 2013, № 1, с. 44-71.
21. D.K. Babayan, New Silk Roads in the Southern Caucasus. Chinese Geopolitics in a Strategic Region, Yale Journal of Inter-national Affairs. 2015, Vol. 10, Issue 1, p. 39-54.
22. Babayan D.K., The Crimean rupture: Geopolitical repercussions from the Caucasus to Tien Shan in the context of China's interests, Central Asia and the Caucasus. 2016, Vol. 17, Issue 2, p. 30-37.
23. Бабаян Д.К., Китай и Монголия: исторические, политические и психологические аспекты взаимоотношений, Известия Алтайского государственного университета. Серия: исторические науки. 2016, № 4, с. 181-185.
24. Babayan D.K., China's economic interests in the North Caucasus, Caucasus Survey. 2016, Vol. 4, № 1, p. 31-49.
25. Бабаян Д.К., Крымский контекст и стратегические интересы Китая, Свободная мысль. 2016, № 5, с. 143-152.
26. Бабаян Д.К., Китай и Монголия: Геополитическое взаимоотношение «мягкой силы» и «жесткой слабости», Азия и Африка сегодня. 2017, №9, с. 19-22.

БАБАЯН ДАВИД КЛИМОВИЧ

ПОЛИТИКА КИТАЯ В ЦЕНТРАЛЬНОЙ АЗИИ И НА КАВКАЗЕ В КОНЦЕ 20 - В НАЧАЛЕ 21 ВВ.

Диссертация на соискание ученой степени доктора исторических наук по специальности 07.00.02 – «Всемирная история, международные отношения».

Защита состоится 26-го марта, 2018 г., в 15:00, на заседании специализированного совета 006 «Всемирная история, международные отношения», действующего при Институте Востоковедения НАН РА, по адресу: 0019, Ереван, пр. М. Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Целью настоящего диссертационного исследования является рассмотрение политики Китайской Народной Республики (КНР) в стратегически важнейшем геополитическом пространстве Центральной Азии и Кавказа с конца XX века до сих пор, ее эволюции, основных задач, тактики и стратегии, применяемой Китаем.

Научная новизна работы заключается в комплексном рассмотрении китайской политики в Центральной Азии и Закавказье как частей единого геополитического пространства. Если изучению китайской политики в Центральной Азии посвящено достаточно много работ в разных странах, то научные работы по политике КНР на Кавказе и в кавказско-центральноазиатском мегарегионе отсутствуют вообще. Нет исследований также и по тематике взаимоотношений КНР с непризнанными государствами Южного Кавказа. Таким образом, работа представляет особую важность, являясь, по существу, первым исследованием в данном научном направлении.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованной литературы, включающей перечень из более 700 источников.

В первой главе «Роль и место КНР в современной системе международных отношений» рассматриваются взаимоотношения КНР с другими центрами силы, в частности с США, основополагающие принципы внешнеполитического поведения Китая и ряд других вопросов. В первом параграфе этой главы «Политика США – один из основных ориентиров действий КНР на международной арене» рассматривается влияние политики Вашингтона на политику КНР. Политика США оказывает весьма сильное влияние на действия Китая, инициируя те или иные действия и шаги со стороны Пекина. Во втором параграфе «Невозможность самоизоляции» подчеркивается невозможность самоизоляции КНР в нынешних условиях,

что объясняется рядом причин, в частности, нынешней международной системой, бурным развитием китайской экономики, необходимостью наладить бесперебойный поток углеводородных ресурсов, собственные запасы которых недостаточны для удовлетворения все возрастающих нужд Китая. В третьем параграфе «Основополагающие принципы поведения Китайской Народной Республики на мировой арене» рассматриваются лежащие в основе внешней политики Китая принципы и их эволюция за последние десятилетия. Пекин проводит политику трансформации мирового баланса сил из однополярной структуры в многополярную.

Вторая глава «Геополитика Китая в Центральной Азии» рассматривает геополитику КНР в Центральной Азии, основные цели и задачи Пекина в этом регионе. В первом параграфе «Общая характеристика центральноазиатского направления китайской геополитики» рассматриваются специфика данного направления китайской политики, важность региона для Китая, подходы, применяемые Поднебесной в регионе и ряд других вопросов. Во втором параграфе «Основные стратегические императивы китайской политики на центральноазиатском направлении» рассматриваются основные цели и императивы китайской политики в Центральной Азии, существующие здесь у Китая опасения и стратегическое значение углубления экономических связей со странами региона. В третьем параграфе «Краткая хронология развития двусторонних связей КНР со странами Центральной Азии» приводится хронология развития взаимоотношений Китая с каждой из стран региона, динамика товарооборота и т.д. В четвертом параграфе «Влияние российского фактора на политику КНР в Центральной Азии» рассматривается воздействие России на политику Китая в Центральной Азии. В пятом параграфе «Стратегическая важность сотрудничества в энергетической и транспортной сферах» отмечается, что в энергетической сфере императивом китайской политики является налаживание бесперебойного потока углеводородного сырья из Центральной Азии в КНР. В шестом параграфе «Формирование в Центральной Азии китайской диаспоры» рассматриваются вопросы, связанные с возможностью демографического закрепления этнических китайцев в странах Центральной Азии. В параграфе «Гидрополитика» рассматриваются проблема воды в Китае и странах региона, возможность ее задействования для создания ситуации взаимозависимости со странами центральноазиатского региона.

Центральная Азия является одним из самых ключевых регионов для Китая, от влияния в котором во многом будет зависеть будущее КНР и ее положение на мировой арене. Ключевая цель геополитики Китая в центральноазиатском регионе - не допустить, чтобы Центральная Азия попала под влияние потенциальных соперников и геополитических

конкурентов. Центральная Азия должна стать стратегическим тылом КНР. В качестве основного механизма достижения этой цели представляется углубление экономических связей со странами региона, трансформация уязвимости во взаимоуязвимость и зависимости во взаимозависимость. В Центральной Азии КНР особое значение уделяет взаимоотношениям с Москвой и уважению интересов России, что позволяет решать целый ряд ключевых задач тактического и стратегического характера.

В третьей главе «Роль и место Кавказа в геополитической повестке Китайской Народной Республики» рассматривается геополитика Китая на Кавказе, основные императивы китайской политики в данном регионе. В первом параграфе «Основные принципы китайской геополитики на кавказском направлении» рассматриваются основополагающие принципы, которыми руководствуется Пекин проводя свою политику на Кавказе и ключевые цели, которые он стремиться достичь в данном регионе. Во втором параграфе «Признанные страны» рассматривается политика КНР на Южном Кавказе, с каждой в отдельности взятой признанной страной данного региона. Исследуются взаимоотношения КНР с Азербайджаном, Арменией и Грузией. Во третьем параграфе «Полупризнанные и непризнанные государства» рассматривается политика КНР с каждой в отдельности взятой непризнанной или частично признанной страной Южного Кавказа.

Среди ключевых геополитических задач, стоящих перед Китайской Народной Республикой на кавказском направлении, является недопущение включения Закавказья в сферу влияния соперничающих с КНР центров силы, налаживание эффективного противостояния таким идеологиям, как пантюркизм и исламский фундаментализм, а также расширение и укрепление связей с регионом в целом и его отдельными странами и субъектами. Пекин налаживает отношения со всеми странами региона, вне зависимости от признанности или непризнанности, но в последнем случае, связи налаживаются на уровне частного предпринимательства, что позволяет обходить нежелательные политические последствия. Закавказье предстает своего рода геополитической «пуповиной» к Центральной Азии. Оно соприкасается со стратегически важнейшими регионами Центральной Азии, Северного Кавказа, Ближнего Востока и ввиду своей географии попросту предопределяет вовлечение Китая в геополитику этого региона, хотя утверждать, что на данном этапе Кавказ стал приоритетным направлением китайской геополитики, также было бы не совсем верно. Тем не менее, вовлечение Китая в геополитику этого региона объективный процесс, контуры которого уже вырисовываются.

В Заключении подводятся итоги исследования, содержатся основные выводы диссертации, даются практические рекомендации и предложения.

BABAYAN DAVID

CHINA'S POLICY IN CENTRAL ASIA AND THE CAUCASUS FROM THE END OF THE 20th-BEGINNING OF THE 21th CENTURIES

The defense of the dissertation will take place 15:00 on the 26th of March of 2018, at the meeting of the Specialized Council 006 "World History, International Relations" at the institute of Oriental Studies of NAS RA.
Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan Ave., 24/4.
The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Sciences in the Field of "World History, International Relations" 07.00.02

SUMMARY

The aim of the research is to study and analyze the policy of the People's Republic of China (PRC) in a strategically important Central Asia – Caucasus region from the end of the XX -beginning of the XXI Centuries, its evolution main tasks, the applied tactics and strategy.

The scientific novelty of the research is in an integrated examination of Chinese policy in Central Asia and the South Caucasus as integral parts of a single geopolitical space. In contrast to numerous analyses and researches concerning Chinese policy in Central Asia in various countries there are no researches and studies of Chinese policy in the Caucasus or the Central Asian – Caucasian mega region. There is no research of Chinese policy towards the non-recognized or partially recognized states of the South Caucasus either. Thus, this dissertation is an important input in studying Chinese policy in the above mentioned geopolitical space being the first in its type.

The dissertation consists of the introduction, three chapters, the summary and bibliography of more than 700 cited sources.

The first chapter "The Role and Place of the PRC in the Current International System" deals with the relations of the PRC with other power centers, particularly the USA, the cornerstone principles of the China's foreign policy and various other issues. In the first section of chapter entitled "The US Policy as a Landmark of the Chinese Policy in World Politics" analyzes the influence of the Washington's policy of the direction of Beijing's policy and shows that this very influence initiates various types of actions and activities on the PRC. The second section of the chapter "The Impossibility of Self-Isolation in the Current Period" accentuates the impossibility of adopting the self-

isolationism policy by Beijing because of the nature of the current international system, robust development of Chinese economy, the necessity of guaranteeing uninterrupted supply of hydrocarbon resources to meet the local demands impossible to compensate by its own sources. The third section "The Cornerstone Principles of the China's Foreign Policy" touches upon the basic principles of Chinese foreign policy, their evolution during the last decades demonstrating that Beijing has been waging a policy aimed at transforming the global power balance from the unipolar system to the multipolar one.

The second chapter "Chinese Geopolitics in Central Asia" analyzes the PRC's geopolitics in Central Asia, its main objectives and tasks in this region. In the first section of this chapter entitled "The General Characteristics of the Central Asian Vector of the Chinese Geopolitics" the specifics of the Chinese policy in this region, the importance of Central Asia for China, the strategy applied there by Beijing and a number of other questions are touched upon. The chapter's second section "Main Strategic Imperatives of the Chinese Central Asian Policy" presents the main aims and goals of Chines policy in Central Asia, Beijing's concerns and strategic significance of cementing economic with the regional states. The third section "Brief Chronology of Bilateral Ties between China and the Central Asian Countries" presents the chronology of developing bilateral ties with the regional states, bilateral foreign trade dynamics, etc. The chapter's fourth section analyzes the influence of Russia on the Chinese policy in Central Asia. The underlining idea of the fifth section "The Strategic Importance of Cooperation in Energy and Transport Spheres" is that the uninterrupted supply of hydrocarbon resources from Central Asia is among the key imperatives of the PRC energy policy in the region. The possibilities of Chinese demographic penetration into the region are analyzed in the sixth section of the chapter entitled "The Formation of the Chinese Diaspora in Central Asia". The last section of the chapter "Hydropolicy" analyzes the problems of water resources and their shortages in China and the Central Asian states and the possibilities of applying hydropolicy on the side of Beijing for achieving interdependence with regional states.

Central Asia is a region of utmost importance for China with the future of Chinese position in the international arena being a derivative from the Beijing's influence in this very region. The key imperative of the PRC in Central Asia is to exclude any possibility of Central Asia to go under the influence of its potential geopolitical rivals. Beijing sees Central Asia as its strategic rear. Among the key mechanisms to achieve this goal is deepening and widening economic cooperation with the regional countries, transforming vulnerability into inter-vulnerability, dependence into interdependence. In Central Asia Beijing pays special attention to the relations with Moscow, respecting the interests of the

latter. This approach enables to solve a number of key tasks of tactical and strategic nature.

The third chapter "The Main Principles of Chinese Geopolitics in the Caucasus" analyzes the PCR's policy and its key imperatives in the Caucasus. The first section of this chapter is about the basics of Beijing's policy in the Caucasus and key tasks it wants to materialize in this region. The second section entitled "Recognized States" presents Chinese policy in the Southern Caucasus and with each of the region's recognized states - Azerbaijan, Armenia and Georgia. The third and the last section of the chapter analyzes Chinese policy towards each of the three non-recognized and partially recognized state of the Southern Caucasus.

Among the key geopolitical goals of the People's Republic of China in the Caucasus is to exclude any possibility for the rival power centers to bring the region under their influence and effectively contend such ideologies as Pan-Turkism and Islamic fundamentalism, as well as to enlarge and strengthen ties with the regional countries and their administrative units. Beijing develops relations with all the countries of the region irrespective of their status and recognition. However, the relations with the non-recognized and partially recognized state are exclusively based on private business sector network, which enables to avoid delicate and undesirable political consequences. The Southern Caucasus is a sort of geopolitical "umbilical cord" towards Central Asia. The region is adjoint to Central Asia, Northern Caucasus and the Middle East. Its geography presupposes the engagement of China into the Caucasian geopolitics even though it cannot be stated yet that the Caucasus has become a top priority direction for Chinese policy. However, the involvement of China into the Caucasian geopolitics is an objective process and is an already palpable reality.

The Conclusion sums up the results of the research and main conclusions with practical recommendations and advises being provided.